

Արևադաշտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի բնակչության առջև 2014թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի կողմից 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը կատարած աշխատանքների մասին ներկայացված է 26.01.2015թ. համայնքի ժողովում: /Ձեկ. համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան/

Հարգելի Արևադաշտացիներ, հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Արևադաշտի Գյուղապետարանի և ավագանու կողմից 2014թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Կատարած աշխատանքները:

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար, ավագանի:

Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլոր խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծել ի օգուտ մեր բնակչությանը:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 11 ավագանու նիստ:

Պատասխանել ենք ստացվող բոլոր գրություններին և դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 17 որոշում և արձակվել է 10 կարգադրություն:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով, կատարվել է

համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվետվություն և ներկայացվել է վիճակագրական վարչություն:

Դրամական օգնություն է տրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է զարնանային գորահավաք: Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից: Նոր թաղամասի մուտքի գլխավոր գազատար խողովակների աշխատանքները ավարտված են, սակայն ընդունման և հանձնման գործընթացը չի կատարվել նրանց աշխատանքային թերությունների պատճառով:

Խմելաջրի նոր գիծ է անցկացվում դեպի Արևադաշտ Ասիական բանկի ֆինանսավորման շնորհիվ: Աշխատանքները դեռ ընթացքի մեջ են, որի ավարտից հետո ազգաբնակչությունը կունենա ամենօրյա խմելու ջուր՝ հաշվիչների առկայությամբ:

Ազգաբնակչության մի մասը արդեն մի քանի տարի է ինչ ոռոգման ջուր ունի, իսկ մյուս մասն էլ չունեն, այսօր մյուս մասի ոռոգման ջրագիծը պատրաստ է, սակայն Արմավիր ՋՕԸ դեռ պայմանագիր չի կնքել ինչ-ինչ պատճառներով: Շուտով բոլորն էլ ապահովված կլինեն ոռոգման ջրով: Մարզպետի միջամտությամբ Արևադաշտ համայնքում տեղադրվել է մեկ հակակարկտային կայան:

2014թ-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը գյուղապետարանը ոռոգման ջրով ապահովելու նպատակով խորքային հորի վերանորոգման համար նախատեսել է 1000000 ՀՀ դրամ:

Համայնքի որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով է, որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական հիմունքներով վերցված հողատարածքներ,

չեն ցանկանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետև կկատարվեն բավարար քանակությամբ գանձումներ: Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ գյուղապետարանի աշխատողները չունեն հողի հարկի պարտքեր: Տարեկան հողի հարկի գումարը կազմում է՝ 88.3 % իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 135.7 %, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 101.0% վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 55.9 %:

Չամայնքը ունի մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ լուրջ ուշադրություն ենք դարձնում և հնարավորինս չափ պետք է արագացնել գազի և խմելաջրագծերի կառուցման հարցը, և իրականացնել, թե ճանապարհաշինության մեջ, թե դպրոցի շենքի կառուցման հարցը: Դպրոցի կառուցման աշխատանքները կատարելու է ԱՄՆ-ի հայ կրթական կազմակերպության կողմից և մի շարք ուրիշ հիմնահարցեր իրականացնելու գործում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից բնակչությանը տրվել են տեղեկանքներ, քաղվածքներ, կատարվել են դիմումների քննարկումներ:

Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 01.01.2014թ. մինչև 31.12.2014թ.

- հողի հարկ 6447.0 դրամ
- գույքահարկ 474.9 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար 1118.2դրամ
- դոտացիա 3902.5դրամ
- տեղական տուրքեր 70.8դրամ

Ծախսերի կատարողական


- գյուղապետարանի աշխատավարձ 7363.6 դրամ
- Պարգևատրումներ 367.2 դրամ
- Սոց Օգնություն 1360.0 դրամ
- Գործուղում և ծառայութ. վճար 160.0
- Էլ.էներգիայի գումար 60.0

Տեղեկատվական ծառայություն 143.4
 Տրանսպորտային նյութեր 500.0
 Կապի ծառայություն 90.0
 Վարչական սարքավորումներ 100.0
 Համակարգչային ծառայություններ 74.4
 Շինությունների կառուցում 950.0
 Սարքավորումների ընթ. նորոգում 50.0
 Կառավարչական ծառայություններ 280.0
 Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող 150.0
 Մշակույթային միջոցառումներ 600.0
 Նախագծային հետազոտական ծախսեր 195.0
 Բնական գազի շինարարություն 2626.0
 Ոռոգման ցանցի կառուցում 667.2
 Գրասենյակային նյութեր 150.0

Քարտուղարություն

01. Հունվարի 2014թ.-ից մինչև 3 1. դեկտեմբերի 2014թ

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
11	53	108	91	181

Արևադաշտ համայնքի **ղեկավար**  **Հ.Օհանյան**

